

# ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՌՅՀԱ-ՌՅՀԲ


ՀԱՏՈՐ

ՀԹ

1922

ՄԱՅԻՍ

ԹԻԻ 5



## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆՔ ՄԻԻԹԱՐԱԿԱՆՔ

## ՍՏԵՓԱՆՈՍ Վ՛. ԹՈԽԱԹԵՑԻՈՅ

Ջեռագրատանս Ոսկեփորիկ ԼԹ. (Կանոնագիրք ժե. Դատաստանագիրք և Անտարք), որ կը բռնվանդակէ նաև ճոխ նիւթեր՝ մեր բանասիրաց առջև կը դնէ Ստեփանոս Թոխաթեցւոյ մէկ շաւկան և անտիպ գրութիւնը հետեւեալ վերնաւ գրով. « Բանք և մխիթարականք Ստեփանոս Թաւադատցի անպիտան և անարժան իրիցունս, մեր սրտէ սիրիցեալ և անմիջոց բարեկամացն »:


Ստեփանոսի (Ծն. 1558) վարուց և ընդհանուր գործոց վրայ տեղեկութիւն փափագողք մանրաւ մասն պիտի գտնեն յայտնի բանասէր Հ. Ն. Ակիրնեանի մէկ ուսումնասիրութեան մէջ<sup>1</sup>։ Կը յաւելունք զայս միայն որ, ինչպէս ինքնին կը տեսնուի, մեր այս հրատարակածը բոլորովին

զատ գրութիւն մ'է, այսինքն թէ նոյն չէ Հ. Ակիրնեանի յիշատակած գրութեան հետ, որ կ'ակնարկէ Թոխաթեցւոյ « այն Մխիթարաւ կան խօսքերն, զոր գրած է ի տէր պապան վասն տարածում դատերն իւրոյ մաւ հռչակ »:

Գրագրի նկատմամբ իբր ծանոթութիւն կը դնենք էջ 127-ին վրայ եղած անոր մէկ զըւխտոր Յիշատակարանը, որ է այս. « Փառք հաւր անսկզբն անեղ և անհասի, Որդոյն « միածնի. և ծնունդն անսկզբնականին հաւր « և սուրբ հոգոյն ճշմարտին որ է բխումն և « ելումն. անճառաբար ի հաւրէ. երկց անձանց « և միոյ բնութեան և աստուածութեան յաւիւ « տեան և յաւիտենից »:

« Այդ աւարտեցաւ գիրքս ձեռամբ տրուպ և « անմիջապէս տալովն Ամիրասէ յեզնկացոյ. « ի յամի մարգերութեանն տեառն մերոյ և « Թոխաթեցւոյ միտուս իրատուս ՌՈՄԷ (= 1857). »

1. Հինգ ՊԱՆԴՈՒՅՏ ՏՈՂԱՍԱԾՆԵՐ. Ստեփանոս Երեզ  
Թոխաթեցի. Վրէնս 1921 էջ. 127.  
2. Անդ. էջ 128.



« և թորգոման թվկն. Ռձէ և ի թագաւորու-  
 « թեանն տաճկաց սուլթան մահամատին. և ի  
 « կաթողիկոսութեանն տէր յակովբին վաղար-  
 « շապատ քաղաքին սուրբ էշմիածնա և ի հայ-  
 « բապետութեանն սուրբ երուսաղեմայ տէր աս-  
 « տուածատուրին. գրեցաւ ի քաղաքն պաւնտոս  
 « զոր այժմ ասեն տրապիզոն: Չեոքս եթթա և  
 « զիրո ծնայ, և մարմինս ի հող կու դառնայ.  
 « Ես ալ մեղաւոր եղայ, զժողաց դռան մաւտե-  
 « ցայ, քանի որ տիմար էի նայ մեղաց ի զատ  
 « կու փախչէ՞ի. երբոր մեղօ(աւ)որ եղայ զժողաց  
 « ճամբան ես ուսայ: Արդ աղայեմ զձեզ ով  
 « հայրք և եղբայրք թողութիւն խնդրեցե՞ք վասն  
 « իմ մեղաւորիս խնդիր ի յառատածիր պար-  
 « զեղէն ի քրիստոսէ. և ինքն քրիստոս աս-  
 « տուած պարգեիլն շնորհաց պարգեհեցէ և զա-  
 « ռատ ողորմութիւնն իւր յիշողացն և յիշեցե-  
 « լոցն: Յիշե՛ծ իջ զհայրն իմ զմահտեսի պալին  
 « և զմայր իմ զմահտեսի նաւապլն և զէ՛ եղ-  
 « բայրքն ի(մ)հարազատ. (զամբրասն) զախիճանն,  
 « մահտեսի աշըխն, զեաղուպն, զաւաք պարոնն.  
 « զտատուրն և զյովսէփն: Ով ոք հանդիպի սմա  
 « կարդալով կամ արինակելով զհայր մեր յերկին  
 « հրամայեցէք: Ով ոք որ ասկից թուխտ կտրէ  
 « կամ գողանայ զգիրքս կամ ծախէ, զպատիժն ի  
 « կայէնէ առնու և զմասն ի յուղայէ մատնիլին  
 « քրիստոսի. ամմէն. հայր մեր որ յերկինս  
 « սուրբ եղիցի անուն քո... »:

Սոյն Ոսկեփորիկին մեծութիւնն է 21 X 15  
 (16 X 11). գիր՝ նոսրագիր մաքուր թուղթէ՝  
 դեղնորակ և հաստկէի:

Յաջորդ «ՔԱՋՄԱՎԷՊ»ով պիտի հրատարակենք  
 Ստ. Թոթաթեցւոյ մէկ ուրիշ գրուածքը՝ ողբ մը,  
 որ միանգամայն գեղեցիկ ու զոդտրիկ բանա-  
 ստեղծութիւն մ'է. ստուգիւ եղօր մը վրայ ար-  
 տայայտուած անկեղծ ու սրտազին զգացում  
 ներ են:

Հ. Ղ. Տ.

«Սարկաւազ և տիրացու իմաստուն և  
 հանճարեղ խոճայ ամիրասի՛, և իւր ըն-  
 տրեալ և փառաւոր եղբարքն Ախիճանին  
 և Աշըխին, Էյաղուպին և Պարոնին, Տա-  
 տուրին և Յովսեփին, և մեր մաւրն և  
 քրվտոցս, և իւրեանց զաւակացն և արեան  
 մերձաւորացն:

« Զի՛մըդ և ճրպէս հարցանեմ զձեր  
 սիրտն ի խոճայ Պալէ և խոճայ Ախիճա-  
 նին, կարաւառնացն և փափաքանացն:

Զոր Տէր Աստուած ողորմեսցի և զթմացի  
 իւրեանց հոգոյն, և զիւրեանց մեղքն և  
 զ(յ)անցանն շնջեսցէ և քաւեսցէ, և հան-  
 զուսցէ ի տեղով լուսոյ և հանգուսցէ ի  
 հանգստեանն. ուր անորոտում ուրախութիւն  
 է և ցնծութիւն. ուր բերկրին արդարքն  
 և զուարճանն ընտրեալքն. անդ պարին  
 և փառաւորին և պատուին ի փառս Փրիս-  
 տոսի Աստուծոյ մերոյ որ է աւրհնեալ յա-  
 խտեանս ամմէն:

« Եւ զձեզ զամենեսեան Հոգին սուրբ  
 մխիթարեսցէ, որպէս մխիթարեաց զտի-  
 րամայր սուրբ Աստուածածինն և զսուրբ  
 առաքեալն ի սուրբ վերնատունն, և փա-  
 րատեցոյց զսուրք և զարտ(մ)ութիւն նոցա:  
 Եւ զայլ մնացեալ զգոյրքն և զեղբայրքն  
 և զթոռանքն և զազգականքն մնացական  
 առնէ, և շատ տարաւք և ամաւք յերկարէ,  
 և ծերացուսցէ որպէս զՄաթոսաղա և  
 զԴ. ոյ, իրրե և զԱրարհամ և զձերն Սիմէոն՝  
 ծաղկեալ ալեաւք և բարի զործաւք մինչև  
 ի կէտ կոճանն: Եւ յետ աստի ելանելոյ  
 տեսանել տայ զձեր ծնաւորքն և զեղբայրքն  
 և զազգականքն և զայլ ամենայն սուրբոն  
 և նոքաւք աւրհնէք զՀայր և զՍրդին և  
 զՍուրբ Հոգին անգրաւ յ(աւ)խտեան ամմէն:

« Եւ որպէս զովցիցի զձեզ խոճայ Պալի  
 և խոճայ Ախիճան հայրք և եղբայրք իմ,  
 անտես սիրելիք և բարեկամք ինձ մեղա-  
 ւորիս և անարժան ըստեփանոս իրիցիս՝  
 հոգոյս և փոշոյս: Չխոնարհութիւն՝ բա-  
 րուցդ առացիդ՝ թէ զհնգութիւն վարուցդ,  
 զարբութիւն մտացդ՝ թէ զմարբութիւն ան-  
 ծինդ. զաստուածապաշտութիւն հոգոյդ՝  
 թէ զպարկեշտութիւն մարմնոյդ, զլու-  
 թիւնդ՝ թէ զհամբերութիւնդ, զողորմա-  
 ծութիւնդ՝ թէ զաղբասիրութիւնդ, զքա-  
 հանայասիրութիւնդ՝ թէ զգամասիրու-  
 թիւնդ, և այլ ամենայն սրբութիւն և զա-  
 ռաքնելութիւն, զոր ժողովեալ և ամբարեալ  
 էիք յանձինս ձեր, ո՛վ աչաց լոյս սրտէ  
 սիրելի հայր և եղբայր իմ խոճայ Պալի  
 և խոճայ Ախիճան. Աստուած ողորմի ձեր

հոգոյն: Խնդրեմ ե հայցեմ ի բարեբաւր Տիառնէն, զի զձեզ ի սուրբն դասէ ե ընդ նահատական պսակէ ամեն:

« Դուք զարմօք ե զաւակաւք, սոյով ե սոխով, որդովք ե դստերովք, իմաստունք ե պատուականք, հլու ե հնազանդք, հեզք ե խոնարհք, ողորմածք ե զթածք, սրբասէրք ե մարգարտք, հանճարեղք ե խորհրդականք, հնարագէտք ե արուեստաւորք, կարգացողք ե հասկաւորք, տումարագէտք ե ամենայն բանի ե զործի հմուտք ե ճարտարք, անուանիք ե պատուելիք, մեծագգիւր ե փառաւոր, սիրելիք ե բարեկամք ամենայն ազգաց ե ազանց, պարոնաց ե իշխանաց, կաթողիկոսաց ե եպիսկոպոսաց, քահանայից ե կրանաւորաց, հրէից ե տաճկաց, մեծամեծաց ե փոքունց: Դուք հիւրայեւք ե պանդրիւտասէրք, տնանկասէրք ե անարգամեծարք, դուք պարծմանք ե փառք ի մէջ հաւատացիւց, ակն ե կուհար ի մէջ ժողովրդոց ե մարգարիտ քրիստոնէից:

« Այլ զի՞նչ ասացից ե ռդպէս գովեցից զձեզ ամենայն գովութեանց արժանիք, արքդ ե կանայքդ, ծերքդ ե տղայքդ, երիտասարդքդ ե կուսանքդ, դուք ողջ միջիթարիք ե դուք շատ ապրիք: Աստուծով միջիթարիք: անհանց կու լինայ աշխարհս եկաւդն պիտի գնայ որ ճար չկայ: զի ի վրանիս հայրենական պար(տ)ք է որ պիտի վճարենք: Եթէ զխոնայ Ախիճանն կու հարցանէք նայ, ճշմարիտ մարտիրոս ե նահատակ է, որ արեամբն իւրով մկրտեցաւ, որպէս զսուրբ Կարապետն Յովհաննէս ե զսուրբ առաքեալն Պաւլոս ե զառաքեալն Յակովբոս, որ զգլուխ հատին: Տեսէք զասմաւորացն բաներն, թէ որպէս իւրեանքն քաղցր քաղցր երթային ե ի իւրեանց կաման ի բանտ ե ի զնտան մտանէին, ե զանձինս իւրեանց ի մահ մատնէին զանագոն տանջանաւք ե դառն մահուամբ մեռանէին. զգորայ յսկամայ մահն կամաւոր արդարութիւն համարեցիք:

« Երկու կտրիճ այլ մեզի ծանաւթ ե համշարի կտր. մէկն անգի իրիցփոխան էր, խոնայ Պաղտատար կասէին նմա, նման

մեր աղբաւրն Ախիճանին պաւով ե պաւսունով, թիկնաւք ե անձամբ, մաւրուան կարմիր ե երկայն մինչե ի մէջքն, զոր մեք ոսկիմաւրուք իրիցփոխան կու ձայնէաք. նայ այլ այն նաւին մէջն էր, զորոյ զլուխ նորայ կտրեր էին, ե կնիկն ք որբով քնաց այրի, որպէս զգոյր մեր. ե մէկ կտրիճմ այլ կայր ի յայն նաւին, խոնայ Առաքել կասէին, ի՞նչ տարեկան, ծնաւդացն մէկ հատիկ ւանդրանեկիկ, այլ ոչ բերելու կայ ե ոչ լինելու ե մէկ տղեկան հար, գնաց ինքն ե գնաց ապրանքն, որպէս զեղբայր մեր զխոնայ Ախիճանն:

« Փիտեմ որ խիստ հոգալու է ե ափսոսալու, չեմ կարեր ասել թէ մի լայր, բայց չափաւոր, զի այնչափ լալն ե հոգալն, սուր պահելն ե ժամ չերթալն հակառակութիւն ե դիմամարտութիւն է հետ Աստուծոյ:

« Հայեցէք ի հայոն համբերութեան Յոր, որ Ժ տարի դուստր ե որդիոյն վերայ համատարած տնեին փաւ ե զամմէնն սպաննեց, ե զեզի ե զպաղչայ զձի ե զճորի, զկովն ե զկիթն, զոչխար ե զպախտէ ե զայլն ամենայն, որն զողացան ե որն մեռան, ե սբբաջինջ եղան նայ զահաւայր զտեառնէ ե ասէր. Տէր ետ ե Տէր էառ անուն տեառն արհնեալ. մերկ ելաք յորովայնէ ե մերկ մտանեմք ի տապանի: Եւ մարգարէն Դաւիթ Ա աւր տայ հրաման լալոյ. Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. առաւօտոյ եղիցի ուրախութիւն: Եւ Սողոմոն(ո)ն ասէ. Լաւ է աւր մահուն քան զաւր ծնընդեան: Եւ առաքեալն Պաւլոս ասէ. Լացցեն հրէայքն ե կոծեսցեն թերէհաւատքն, զի նոցայ են արժանի կոծոց ե ողբոց. այլ դուք միջիթարեցաւ, բուր զալլստեամբն Գրիստոսի: Զի մեք ակն ունիմք յարութեանն որ յաւուրն դատաստանի ելանեմք ամենեքեան ի հոգոյ ե ի գերեզմանացն, ողջանդամ մարմնով ե պայծառ հոգով, քան զհիմի այլ գեղեցիկ ե պատուական, որպէս Գրիստոս յարեաւ ե ելաւ ի գերեզմանէն ե երեցաւ կանանցն իւղարբերիցն ե ի հետ

նոցայ զրուցեց և ասաց թէ ողջ էք, այսինքն ազնիւ էք մի լաւ էք մի. և նոցայ ճանաչեցին և խնդացին. կալան գոտս նորայ և երկիր պագին. և այն ատեն Զատկին ի լեռան գալիլեայ երևեցաւ առաքելոցն, և ի հետ նոցայ զրուցեց և ասաց. Գնացէ՛ք այսուհետև մկրտեցէ՛ք զամենայն հեթանոսս: Եւ բանի անգամ յետ յարու. թեանն ի ծովեզերն երևեցաւ, և նորաստեղծ ձուկն ի կրակին խորովեալ կերան: Եւ ի վերնատունն դրաւն փակեալեանն հմուտ և երևեցաւ, ողջոյն հետ նոցայ և ասաց. Մի երկնչիք ես եմ, եւ իմաւուսայ ճանապարհին ի հետ կղևոսեանցն գնաց և զրուցեց, և զհասցն ի հետ նոցա բեկեաց: Եւ հայրն Աբրահամ և մեծաւունն և աղբատ Ղազարն զմիմեանս տեսին և ճանաչեցին և հետ միմեանց զրուցեցին: Ով ոք որ ասէ թէ յարութիւն չկայ կամ զրուցել չկայ, անթողի մեղք և չարիք է, հերժուածող է և նզոված: Երբ զրուց չկայ նայ՝ որով տի աւրհանեմք զԱստուած և զովն և զոհանան, զի գրեալ է. թէ անտէնին աւրն ի հրեշտակաց հետ պիտի աւրհնեն զԱստուած և զովն և զոհանան: Եւ մեծ մարգարէն լսայի ասէ. Յարիցեն մեռեալք, կենդանացին ամենեքեան որք եղեալ են ի գերեզմանի. Զարթիցեն ցըն:

ծասցեն և ուրախ եղիցին դադարեալք երկրի: Եւ Եզեկիէ մարգարէն ասէ. կցեցաւ ոսկր առ ոսկր և յարեան և կացին ժողովուրդ բազում յոյժ յոյժ: Եւ Ներսէս հայրապետն ասէ. Գերեզմանք մարդկան բացուին, փտեալ մարմինքն նորոգին, և զոր կեալ թերևս ըլլայ կրեալ կամ կրեալ ձկանց ծովին և զոր զազանքն ի ցամաքին:

« Եւ երբ այսպիսի յոյս և մխիթարութիւն կայ, որպիսի երթանք և տեսնուք զմեր հայրն և զմայրն, զբոյրն և զեղբայրն և զազգականքն և զզրացիսն, զսիրելիս և զբարեկամս, ճանաչեմք զմիմեանս և զրուցեմք հետ միմեանց, ասեմք և լսեմք: Եւ հետ հրեշտակաց միածայնեալ աւրհնեմք զովեմք և բարեբանեմք սուրբ զերբորդութիւնն: »

« Եւ ի ծովն էր խեղդէր և ապրանքն ի ծովն էր գնացեր նայ քիչ մի հոգալու էր. նայ Ախիման եղբայրս հիմի հետ արդարոցն է, ի փառս և ի պատիւ, զի ինչ որ ունէր՝ փողք ի շատէ ի փողբուստ ի վեր մեղք և (յ)անցանք ամենն ըսպան. նողին վիզն մնաց. և ապրանքն առնաւոյն այլ պիտի վճարէ յաւր դատաստանին ըստ այնմ թէ. եւ մազ մի ոչ կորիցէ ի զլիոց ձերոց »:

ԱՄՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

## ՕՁՆԵՑԻՈՅ

ԸՆԴԴԷՄ ԵՐԵՒՈՒԹԱԿԱՆԱՅ ՃԱՌԻՆ

Մենք զէպրեւր մեծ մարդիկ կը շինեն: Պատերազմը անուանի զօրավարներ կը յարուցանէ. մոլորութիւնները մեծամեծ հայրապետներ: Անշուշտ ո՛չ Աթանաս մը, ոչ Կիրեղ, ոչ Ոգոստինոս մը պիտի ունենայինք այնքան մեծ, և թէ անոնք ապրած չըլլային կրօնական և աստուածաբանական հրատապ կոիւնքերու ժամանակ:

Նոյն այդ հակաճառութեանց պայքարը՝ տուաւ և Հայ Եկեղեցւոյ Օձնեցի մեծ հայրապետ մը, ո՛չ ինչ ընդհատ ուղղափառ հաւատոյ քաջ արիւնքներէ և մեծութեան և հանճարի ամէն ձիրքերով օժտուողներէ:

Նուրբ և խորաթափանց միտք, քաջամուտ՝ նախնի Ս. Հարց, հզօր աստուածաբան, պայծառամիտ իմաստասէր,